# ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Լ.Ռ.

*Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական փոփոխությունները կանխորոշեցին կրթական համակարգի արդիականացման անհրաժեշտությունը: Ըստ Թոմաս Կունի՝ հասարակության զարգացման արդի փուլում կրթության մեջ նկատվում են կրթական հարացույցների փոփոխություններ, և կրթության փիլիսոփայության, մանկավարժության մեջ տեղի է ունենում հումանիտար և մարդասիրական շրջադարձ, որը ենթադրում է մարդու և կրթության նոր մեթոդաբանության ուսումնասիրություն[1]: Կարելի է եզրակացնել, որ փոխվել են կրթության գերակայությունները, որ ենթադրում է համակարգի ներսում կառուցվածքային տարրերի մեթոդաբանության վերափոխում, որը պետք է միտված լինի ապահովելու երկրի սոցիալ-տնտեսական, իրավական պահանջմունքները, անձի, հասարակության, պետության պահանջների կայուն հարաբերակցությունը: ՀՀ կրթական համակարգի արդիականացման առաջնահերթ խնդիրներից են ընդհանուր և մասնագիտական կրթության բարելավումը, շրջանավարտի մասնագիտական իրազեկության (նաև կարողունակության, գործիմացության) բարձր մակարդակի ապահովումը: Այս խնդիրները ենթադրում են մասնագիտական կրթության համակարգի արդիականացում, որը հենվում է ինտեգրացման և տեխնոլոգիականացման գործընթացների վրա:*

*Ըստ Լ. Ասատրյանի՝ «կրթության արդիականացման վերաբերյալ ցանկացած դրույթ գործում է որոշակի մանկավարժական հարացույցի շրջանակում»[2]:*

*Ելնելով մասնագիտական կրթության արդիականացման խնդիրներից՝ ներկայումս փոխվել են մասնագետին ներկայացվող պահանջները. մասնագիտական գիտելիքների յուրացումը այսօր բավարար չէ, այժմ հասարակությանը անհրաժեշտ է տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվող, ճիշտ որոշումներ կայացնող, պատասխանատու և թիմային արդյունավետ աշխատանքի պատրաստ, իրազեկ մասնագետ:*

---

[1] **Кун Т.** *Структура научных революций (Сборник научно-образовательных докладов и статей, Е., 2014, с.13-17).*

[2] **Асатрян Л.Т.** *Управление модернизацией образования в контексте современных педагогических парадигм (Сборник научно-образовательных докладов и статей, Е., 2014, с.13-17).*

Ժամանակակից բուհում իրավական կրթության նպատակը համապատասխան մասնագիտացում և բարձր որակավորում ունեցող իրավագետ պատրաստելն է, որը պետք է ձգտի մասնագիտական անընդհատ աճի, տիրապետի իմացության որոշակի մակարդակի:

Ի պատասխան XXI դարի մարտահրավերների, իրավական կրթության համակարգում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Դրանք մասնավորապես վերաբերում են կրթության բովանդակությանը, կրթական հարացույցին, դասավանդման և ուսուցման տեխնոլոգիաներին և այլն:

Ելնելով բովանդակային նոր քաղաքականությունից՝ պետք է նշել, որ իրավական կրթության համակարգում իր ուրույն տեղն ունի «Սահմանադրական իրավունք» առարկան, որի դասավանդման գործընթացը հիմնվում է ժամանակակից մի շարք հայեցակարգային մոտեցումների վրա:

Մեր կարծիքով, բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումների և դրա հիման վրա կրթության նպատակների վերաիմաստավորման արդի փուլում առավել էական է իրավական կրթության նկատմամբ **լայնախոհ մոտեցումը**: Անցումը գիտելիքներից իրազեկությանը բարձրագույն իրավաբանական կրթության արդիականացման օրինաչափ փուլն է, որը լուծում է պետության, հասարակության, աշխատաշուկայի կողմից իրավագիտական մասնագիտության որակի բարելավմանը ներկայացվող պահանջների և արդի կրթական արդյունքների միջև առկա հակասությունը: Եթե ավանդական համակարգում ուսուցանողի կարևոր գործառույթը գիտելիքներ հաղորդելն էր, ապա կոմպետենտ մոտեցման տեսանկյունից ուսանողների ճանաչողական ինքնուրույն, ակտիվ գործունեության իրականացման ընթացքում նա ստանձնում է կազմակերպչի, կողմնորոշողի, խորհրդատուի դեր:

Կոմպետենտ մոտեցման պարագայում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման համար առաջնային են՝

- կառուցողական մոտեցումը ուսումնառությանը,
- իրավական գիտելիքների համակարգի յուրացումը, հաղորդակցական կարողությունների ձևավորումը,
- առանցքային մասնագիտական կոմպետենցիաների յուրացումը, որոնք հենքային են իրավագիտական կրթության համար,
- իրավական ակտերի, իրավական փաստերի և երևույթների համակարգային վերլուծության, դիտարկման, դասակարգման, հետազոտական գործունեության ծավալման հմտությունների զարգացումը,
- ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը:

Իրազեկ մոտեցումը ենթադրում է ոչ միայն ուսանողների իրական կրթական պահանջմունքների բավարարում և մասնագիտական կարողությունների ձևավորում, այլև մասնագիտական խնդիրների գործնական լուծման տարբերակների առաջադրում, ռազմավարության մշակման, մարդկանց ղեկավարման կոմպետենցիաների յուրացում, առարկայական, ուսումնական ծրագրեր կազմելուն մասնակցության

*հնարավորության ընձեռում, որոնք կնպաստեն նրանց անհատական կրթական ծրագրերի և մասնագիտական հետագծի մշակման գործընթացի արդյունավետությանը:*

*«Իրազեկություն» հասկացությունը չի սահմանափակվում գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման շրջանակում, այն ընդգրկում է այդ գիտելիքների և հմտությունների կիրառման ռազմավարությունը, կառավարման կարողությունը, գործնական բարդ խնդիրների լուծումը: Իրազեկությունը մասնագիտական իմացությունների ամբողջությունն է:*

*Ինչպես նշում է Տ. Իսաևան, «Իրազեկությունը անձի շարունակական ինքնիրացման գործընթացում դրսևորվում է նոր մտքի, գաղափարի, տեղեկույթի, իրականության օբյեկտների ստեղծման կարողությամբ»[3]:*

*Առանձնացվում են մասնագիտական իրազեկության ձևավորման վրա ազդող գործոններ՝ կրթական գործընթաց, ընտանիք, աշխատանք, քաղաքականություն, կրոն, մշակույթ և այլն: Կարող ենք ասել, որ այդպիսի մոտեցումը, ընդհանուր առմամբ, պայմանավորված է կրթական-մշակութային միջավայրով, որտեղ ապրում և զարգանում է անձը:*

*Այն ենթադրում է գիտելիքների փոխանցման կրթական հարացույցի փուլային վերակողմնորոշում դեպի կոմպետենցիաների համալիրի տիրապետումը, որն անհրաժեշտ պայման է ժամանակակից բազմագործոն՝ սոցիալ-քաղաքական, շուկայական, տեղեկատվական-հաղորդակցական միջավայրում ապագա շրջանավարտի մասնագիտական կայացման և կայուն կենսագործունեության համար: Մենք համամիտ ենք Վ.Մ. Կրոլի այն դիրքորոշմանը, որ, «Կոմպետենցիաների տիրապետող մարդը ոչ միայն պետք է տիրապետի գիտելիքների, այլև կարողանա դրանք կիրառել գործնականում»[4]: Այսինքն՝ պետք է պատրաստել այնպիսի մասնագետի, որը լիովին կողմնորոշվում է գործունեության տեսակի մեջ:*

*Մեր կարծիքով, «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման մեթոդական համակարգի կատարելագործման ուղղությամբ իրազեկ մոտեցումը ենթադրում է այդ ոլորտի գիտելիքների յուրացվածության աստիճանի հարաբերակցումը գործնականում դրանց կիրառման կարողության հետ: Այն միտված է ուսանողների իրավական մասնագիտական իմացության ձևավորմանը: Դատական բարեփոխումների, քաղաքացու ազատության և իրավունքների իմացությունը և դրանց կիրառման գործնական կարողությունը այսօր մանկավարժի մասնագիտական կարողության կարևոր բաղադրիչներն են :*

*Մանկավարժական բուհում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման, գիտելիքների յուրացման և գործնականում դրանց*

---

[3] **Исаева Т.Е**. *Классификация профессионально-личностных компетенций вузовского преподавателя ( Педагогика, 2006, N 9, с 57).*

[4] **Кроль В.М**. *Педагогика,М., 2008, с.107.*

*արդյունավետության ապահովումը պայմանավորված է մի շարք կարողությունների ձևավորման հանգամանքներով՝*

- *նպատակադրմամբ,*
- *դասավանդման մեթոդաբանությամբ և ռազմավարությամբ,*
- *«Սահմանադրական իրավունք» առարկայից և դրա դասավանդման մեթոդիկայի տեսական գիտելիքների կայուն մակարդակի առկայությամբ, ինչպես նաև գործնականում դրանց կիրառման իրազեկությամբ,*
- *մասնագիտական առումով տարբեր իրավիճակների ճիշտ վեր-լուծության և դրանց գործնական լուծում տալու կարողություններով,*
- *ուսանողների ճանաչողական և ստեղծագործական ակտիվության խթանմամբ,*
- *ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, որը որակապես փոխում է դասավանդողի և ուսանողների դերերը:*

*Իրազեկ մոտեցման իրացումը «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման ընթացքում ենթադրում է փոխներգործուն ինտերակտիվ տեխնոլոգիաների, ինտեգրված թեմատիկ միավորների և նախագծերի մեթոդների կիրառում, հատկապես իրավական գործնական իրավիճակների մոդելների վերլուծություն, դերային խաղերի, վարժանքների կազմակերպում: Այդ նպատակով նախընտրելի են նաև պրակտիկումները (գործնական աշխատանքները), որոնք ուսանողներին հնարավորություն կտան դրսևորելու իրենց մասնագիտական կարողությունները :*

***Պատմական մոտեցումը*** *«Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման ընթացքում ենթադրում է պատմական կայուն հիմքերի հաշվառում, ինչը պահանջում է իրավական նորմերի պատմական զարգացման դիտարկում, դրանց ազդեցությունը և համատեղելիությունը սահմանադրական կարգավորման մեջ, ինչպես նաև բացահայտում է սահմանադրական իրավունքի՝ որպես գիտության զարգացման ընթացքը: Պատմական մոտեցումը հստակեցնում է սահմանադրական իրավունքի սկզբունքային դրույթները, զարգացման միտումները, իրավական գաղափարները, հայեցակարգային մոտեցումները, բացահայտում՝ իրավական համակարգի և հասարակության իրավագիտակցության ձևավորման, պետության կայացման օրինաչափությունները:*

***Համեմատական մոտեցումը*** *թույլ է տալիս փաստելու, որ «Սահմանադրական իրավունք» առարկայի ուսումնասիրության համար կարևոր է անցյալի և ներկայի գործող ինստիտուտների, կառույցների գործունեության, հայրենական և արտերկրյա փորձի համեմատությունը իրավական, հատկապես սահմանադրական իրավունքի ոլորտում, համեմատական բնութագրերը նպաստում են համեմատական իրավագիտակցության՝ որպես առանձին գիտության ձևավորմանը, որը, ըստ*

*Ռ. Դավիդի՝ իրավական համակարգերի, իրավունքի ուսումնասիրության մեթոդ է*[5]*:*

*Համեմատական մոտեցումը թույլ է տալիս իրականացնել մակրո և միկրո, արտաքին և ներքին, նորմատիվ և գործառական համեմատություններ:*

*Մեթոդաբանական մյուս մոտեցումների հետ զուգակցված համեմատական մոտեցումը հնարավորություն է տալիս ուսումնասիրել անցյալում չդիտարկված սահմանադրաիրավական երևույթները, առանձնացնել սահմանադրաիրավական տարբեր համակարգերի նմանությունները, տարբերությունները, հակասությունները, և դրանով իսկ հիմնախնդիրը դիտարկել տեսական ավելի լայն հայեցակարգերի համատեքստում: Համակարգային մոտեցումը՝ որպես գիտական ճանաչողության մեթոդաբանություն, հետազոտվող օբյեկտները դիտարկում է որպես համակարգ: Դա նշանակում է դիտարկել համակարգի կառուցվածքային բոլոր բաղադրիչները, վերլուծել օբյեկտի արտաքին և ներքին կապերը, գործառույթները: Այս մոտեցման հիմքում ընկած են մի շարք սկզբունքներ.*

- *ամբողջականությունը, որը բնորոշում է համակարգի առանձնահատկությունը, կապերի և հարաբերությունների ամբողջությունը,*
- *փոխկապակցվածությունը բնորոշում է արտաքին և ներքին գործոնների, բաղադրիչների օրինաչափ կապերը,*
- *հիերարխիան, ըստ որի, օբյեկտը դիտարկվում է երեք տեսանկյունից՝ որպես ինքնուրույն համակարգ, ավելի բարձր մակարդակի համակարգի բաղադրիչ, ավելի կազմավորված համակարգ:*

*Համակարգային մոտեցումը իրավական կրթության համակարգում դիտարկում է հետևյալ բաղադրիչների փոխկապակցվածությունը՝ կրթության նպատակ, բովանդակություն, կրթական չափորոշիչներ, ուսուցման տեխնոլոգիա, դասավանդման մեթոդիկա, կրթության համակարգի կառավարման սուբյեկտներ՝ կրթական հաստատություն, դասախոս, ուսանող, ընտանիք:*

*«Սահմանադրական իրավունք» դասընթացում համակարգային մոտեցման տեսանկյունից հասարակությունը /մարդը/, իրավունքը /նորմեր/ և պետությունը դիտարկվում են որպես ամբողջական համակարգ և բնութագրվում՝ համակարգի հատկություններով: Համակարգային մոտեցումը ապահովում է տարրերի փոխադարձ բարդ կապերը: Դասավանդման գործընթացի մեթոդաբանությունը և համակարգային մոտեցման տրամաբանությունը նպաստում են «Սահմանադրական իրավունք» առարկայի ուսուցման գործընթացի հաջորդականությանը, համակարգվածությանը և շարունակականությանը:*

***Մարդաբանական մոտեցումը*** *բացահայտում է հասարակական հարաբերությունների էությունը, մարդու տեղը և դերը հասարակության իրավական կյանքում, որոնք դառնում են իրավական նորմերի, տարբեր*

---

[5] **Давид Р.** *Основные правовые системы современности., М., 1967.*

*իրավական համակարգերի ձևավորման հիմք: Այսպիսի մոտեցումը մարդուն դիտարկում է որպես կենսաբանասոցիալական էակ, իրավական գիտակցության և մշակույթի կրող, միևնույն ժամանակ համադրում մարդու մասին բազմատեսանկյուն գիտելիքները՝ նրան առավել ընդգրկուն ճանաչելու և նպատակաուղղված վերափոխելու համար:*

*Ըստ Կ. Ուշինսկու՝ այս մոտեցումը ենթադրում է մարդու մասին գիտությունների տվյալների համակարգային կիրառում մանկավարժական գործընթացում[6]:*

*Իրավական կրթության համակարգում մարդաբանական մոտեցումը ենթադրում է մանկավարժական գործընթացի սուբյեկտների՝ դասախոսների և ուսանողների փոխգործունեություն և ուսուցման գործընթացի կորպորատիվ կառավարման գործառույթների համաիրականացում:*

***Անձնային-գործունեական մոտեցումը*** *բացահայտում է մարդու էության սոցիալական, գործունային, ստեղծագործական էությունը: Անձնագործունեական մոտեցումը կրթական գործընթացում կողմնորոշված է դեպի անձի մտավոր և բարոյական ազատությունը: Մարդը՝ որպես սուբյեկտ, բնութագրվում է նպատակաուղղված ակտիվությամբ, պրակտիկ գործունեությամբ, գիտակցությամբ: Այս մոտեցման շրջանակում իրականանում է անձի ինքնազարգացումը, ստեղծագործական ներուժի բացահայտումը: Գործունեությունը անձի ակտիվության ձև է և դրսևորվում է նրա կենսակերպում, ուսման մեջ, հետազոտական աշխատանքում և այլն: Այն հասարակության և մարդու գոյության եղանակ է, բնության և սոցիալական իրականության վերափոխման գործընթաց: Միայն մարդու՝ աշխարհի նկատմամբ գիտակից վերաբերմունքը հնարավորություն կտա իրականացնել նրա՝ որպես գործունեության սուբյեկտի գործառույթը:*

*Իրավական կրթության գործընթացում անձնագործունային մոտեցումը որոշում է համապատասխան մասնագիտական գործունեության բավանդակությունը, նախապատրաստում ուսանողին աշխատանքային և հաղորդակցական գործունեության: Բնականաբար, դա պահանջում է նպատակադրվածություն, պլանավորված գործունեության, ինքնավերահսկում, ինքնարդիականացում:*

*Այսպիսով, կրթության արդիականացման ժամանակակից մեթոդաբանական մոտեցումների դիտարկումը թույլ է տալիս բացահայտել իրավական կրթության գործընթացի օրինաչափությունները, հակասությունները և հիմք է դառնում «Սահմանադրական իրավունք» առարկայի դասավանդման ռազմավարության, սկզբունքների, մեթոդիկայի մշակման համար:*

---

[6] **Ուշինսկի Կ.Դ.,** *Մանկավարժական ընտիր երկեր, Ե., 1981:*

## ПРОБЛЕМА МОДЕРНИЗАЦИИ ЮРИДИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННЫХ МЕТОДОЛОГИЧЕСКИХ ПОДХОДОВ

МИРЗАХАНЯН Л.Р.

Резюме

На сегодняшний день весьма актуальна проблема модернизации юридического образования. В контексте вызовов XXI в. в системе юридического образования имеют место коренные изменения, заключающиеся в переосмыслении целей юридического образования на основе таких подходов, как компетентностный, исторический, сравнительный, системный, андрагогический, личностно-деятельностный, которые становятся важными методологическими ориентирами.

## MODERNIZATION OF LEGAL EDUCATION IN THE CONTEXT OF CONTEMPORARY METHODOLOGICAL APPROACHES

**L. MIRZAKHANYAN**

Abstract

At present, the modernization of legal education in the context of modern methodological approaches is crucial. Moreover, the improvement of professional education is based on a number of contemporary conceptual relations and integrative processes. In the present paper, the author shows some of the factors influencing the formation of competence as well as the fundamental changes taking place in the system of legal education in the context of the challenges of the 21st century.

Particular attention is paid to the reconsideration of the goals of legal education on the basis of competence-based, historical, comparative, systematic, andragogical, learner-centred approaches, which have become important methodological guidelines.